«ՔԱՋԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԵՂՈՐԱՅՔԻ ԵՎ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՍՄՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/1

ք. Քաջարան «26»փետրվար 2018թ.

«Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ-ը ի դեմս տնօրենի պաշտոնակատար Հրաչյա Թադևոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Արֆարմացիա»ՓԲԸ-ը, ի դեմս տնօրեն Ա. Հովհաննիսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 767480 (յոթ հարյուր վաթսունյոթ հազար չորս հարյուր ութսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

Սույն պայմանագրի մասով Վաճառողը Ապրանքի մատակարարումը իրականացնում է 2018թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

3. 3 Հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետը՝ մինչև ֆինանսական միջոցները նախատեսվելը, սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Նույն կետի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 ***Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, սակայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն այս պայմանագրի շրջանակներում գնումը կիրականացվի անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության դեպքում և կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա:***

Եթե պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջական խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

«Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ
Հասցե՝ ք.Քաջարան, Բակունցի 1
Բանկ՝ «Ամերիաբանկ»ԲԲԸ
Հ/Հ 1570025402170100
ՀՎՀՀ 09417527
Տնօրենի պաշտոնակատար Հ.Թադևոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Արֆարմացիա»ՓԲԸ
Հասցե՝ ք.Երևան, Ռաֆֆու 111
Բանկ՝ «ՀայԷկոնոմբանկ»ԲԲԸ
Հ/Հ 163008100220
ՀՎՀՀ 02505735
տնօրեն՝ Ա.Հովհաննիսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված
« 26 » փետրվար 20188 թ. կնքված
ՍՄՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	Հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը **
4	33621540	Պապավերին /պապավերինի հիդրոքլորիդ 2% 2.0 լուծույթ ներարկման՝ **Պապավերինի 2% 2**	Բորիսով, Բելառուս	Պապավերին /պապավերինի հիդրոքլորիդ 2% 2.0 լուծույթ ներարկման	սրվակ	30.6	30600	1000	ՀՀ,Սյունիքի մարզ, ք. Քաջարան, Բակունցի 1, «Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	Համապատասխան պատվերի	Նախատեսվում է գնել 2018թ-ի ընթացքում, յուրաքանչյուր անգամ պատվիրատուից պատվեր ստանալուց 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ գնորդի կողմից պատվիրված քանակին և տեսակին
11	33691186	**Պիրացետամ 200մգ/մլ; 5մլ** լուծույթ ներարկման	Բորիսով, Բելառուս	Պիրացետամ 200մգ/մլ; 5մլ լուծույթ ներարկման	սրվակ	37	22200	600			
12	33621250	Դեքստրան 70՝ 60մգ/մլ; 250մլ, պլաստիկե փաթեթ՝ **Պոլիգլյուկին**	Ֆարմատեք, Հայաստան	Դեքստրան 70՝ 60մգ/մլ; 250մլ, պլաստիկե փաթեթ	փաթեթ	1420	28400	20			
13	33621250	Դեքստրան 70 60մգ/մլ; 500մլ պլաստիկե փաթեթ՝ **Պոլիգլյուկին**	Ֆարմատեք, Հայաստան	Դեքստրան 70 60մգ/մլ; 500մլ պլաստիկե փաթեթ	փաթեթ	1680	33600	20			
19	33691176	Տրիմեպերիդին /տրիմեպերիդինի հիդրոքլորիդ 20մգ/մլ; ամպուլներ 1մլ լուծույթ ներարկման՝ **Պրոմեդոլ**	Զդորովյե Նարոդու, Ուկրաինա	Տրիմեպերիդին /տրիմեպերիդինի հիդրոքլորիդ 20մգ/մլ; ամպուլներ 1մլ լուծույթ ներարկման՝	սրվակ	780	78000	100			
21	33691133	**Ջուր ներարկման 2 մլ**	Եր. քիմ. դեղ. ֆիրմա, Հայաստան	Ջուր ներարկման 2 մլ	սրվակ	18.7	1870	100			

24	33621250	Դեքստրան 40 100մգ/մլ; 250մլ պլաստիկե փաթեթ՝ **Ռեոպոլիգլյուկին 40 100 մգ/մլ 250 մլ**	Ֆարմատեք, Հայաստան	Դեքստրան 40 100մգ/մլ; 250մլ պլաստիկե փաթեթ	ֆլակոն	1640	41000	25			տախտ...
25	33621250	Դեքստրան 40 100մգ/մլ; 500մլ պլաստիկե փաթեթ՝ **Ռեոպոլիգլյուկին 40 100 մգ/մլ 500 մլ**	Ֆարմատեք, Հայաստան	Դեքստրան 40 100մգ/մլ; 500մլ պլաստիկե փաթեթ	ֆլակոն	1820	54600	30			
26	33691129	նատրիումի քլորիդ, կալիումի քլորիդ, կալցիումի քլորիդ 8,6մգ/մլ+0,3մգ/մլ+0,49մգ/մլ; 250մլ պլաստիկե փաթեթ՝ **Ռինգեր 250 մլ**	Ֆարմատեք, Հայաստան	նատրիումի քլորիդ, կալիումի քլորիդ, կալցիումի քլորիդ 8,6մգ/մլ+0,3մգ/մլ+0,49մգ/մլ; 250մլ պլաստիկե փաթեթ	ֆլակոն	146	29200	200			
27	33691129	նատրիումի քլորիդ, կալիումի քլորիդ, կալցիումի քլորիդ 8,6մգ/մլ+0,3մգ/մլ+0,49մգ/մլ; 500մլ պլաստիկե փաթեթ՝ **Ռինգեր 500 մլ**	Ֆարմատեք, Հայաստան	նատրիումի քլորիդ, կալիումի քլորիդ, կալցիումի քլորիդ 8,6մգ/մլ+0,3մգ/մլ+0,49մգ/մլ; 500մլ պլաստիկե փաթեթ՝	ֆլակոն	148	44400	300			
52	33611341	Թիամին, թիամինի հիդրոքլորիդ 50մգ/մլ; ամպուլներ 1մլ լուծույթ ներարկման՝ **Թիամի 50 մգ/մլ, 1 մլ**	Եր. քիմ. դեղ. ֆիրմա, Հայաստան	Թիամին, թիամինի հիդրոքլորիդ 50մգ/մլ; ամպուլներ 1մլ լուծույթ ներարկման	սրվակ	18.8	1880	100			
78	33651134	Ցիպրոֆլոքսացին /ցիպրոֆլոքսացինի հիդրոքլորիդ 2մգ/մլ; 200մլ պլաստիկե փաթեթ լուծույթ կաթիլաներարկման՝ **Ցիպրո-Տեք 2 մգ/մլ, 200 մլ**	Ֆարմատեք, Հայաստան	Ցիպրոֆլոքսացին /ցիպրոֆլոքսացինի հիդրոքլորիդ 2մգ/մլ; 200մլ պլաստիկե փաթեթ լուծույթ կաթիլաներարկման՝	ֆլակոն	320	6400	20			
79	33651134	Ցիպրոֆլոքսացին /ցիպրոֆլոքսացինի հիդրոքլորիդ 500մգ	Բորիսով, Բելառուս	Ցիպրոֆլոքսացին /ցիպրոֆլոքսացինի	պարկուճ	32.1	3210	100			

		դեղահատեր թաղանթապատ՝ Ցիպրոֆլօքսացին 500մգ		հիդրոքլորիդ 500մգ դեղահատեր թաղանթապատ՝							
85	33611100	Օմեպրազոլ 20մգ; դեղապատիճներ	Բորիսով, Բելառուս	Օմեպրազոլ 20մգ; դեղապատիճներ	հաբ	10.7	10700	1000			
86	33691176	հիդրոքսիէթիլ օսլա 60մգ/մլ; 500մլ պլաստիկե փաթեթ՝ Պլազմո Տեք	Ֆարմատեք, Հայաստան	հիդրոքսիէթիլ օսլա 60մգ/մլ; 500մլ պլաստիկե փաթեթ՝	ֆլակոն	1800	3600	2			
90	33661114	Ֆենտանիլ 0,05մգ/մլ; 2մլ, լուծույթ ն/ե և մ/մ ներարկման	Զդորովյե Նարոդու, Ուկրաինա	Ֆենտանիլ 0,05մգ/մլ; 2մլ, լուծույթ ն/ե և մ/մ ներարկման	սրվակ	420	210000	500			
98	33651124	Ցեֆտազիդիմ /ցեֆտազիդիմի պենտահիդրատ 1000մգ; ապակե սրվակ, դեղափոշի ներարկման/կաթիլանեռարկման լուծույթի՝ Ֆորտում	Քլաքսո, Անգլիա	Ցեֆտազիդիմ /ցեֆտազիդիմի պենտահիդրատ 1000մգ; ապակե սրվակ, դեղափոշի ներարկման/կաթիլաներարկման լուծույթի՝	ֆլակոն	3680	110400	30			
100	33691223	Նադրոպարին կալցիում 2850ՄՄ AXa/0,3մլ; նախալցված ներարկիչներ 0,3մլ լուծույթ ներարկման՝ Ֆրաքսիպարին 2850ՄՄ AXa/0.3 մլ	Ասպեն, Ֆրանսիա	Նադրոպարին կալցիում 2850ՄՄ AXa/0,3մլ; նախալցված ներարկիչներ 0,3մլ լուծույթ ներարկման՝	հատ	1914	57420	30			

***Գնման ենթակա ապրանքների քանակները համարվում են առավելագույն մատակարարվող քանակներ՝ որոնք ըստ կարիքի կարող են նվազել:**

***Ծանոթություն**

ա. 2,5 տարվանից ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ,

բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը,

գ. առանձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը, դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, դեղը հանձման պահին կարող է ունենալ դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը:

դ.Գնման առարկայի պահպանումը և տեղափոխումն իրականացվում է համաձայն վերջիններիս արտաքին փաթեթի կամ ներդիր-թերթիկի ցուցումների:

***Ծանոթություն** – Եթե գնման առարկաների հատկանիշները պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագրում կարդալ «կամ համարժեք» բառը: Համաձայն (Օրենքի Հոդված 13, Կետ 5)

* Գնման գործընթացը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա :

***Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Քաջարան, Բակունցի 1 «Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ , աշխատանքային օրերին և աշխատանքային ժամերին՝ 09:00-17:00:

****Ապրանքների մատակարարումը Վաճառողի կողմից իրականացվում է Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո յուրաքանչյուր անգամ Գնորդից պատվերը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ Գնորդի կողմից պատվիրված քանակին և տեսակին համապատասխան:

*****Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ	«Արֆարմացիա»ՓԲԸ
Հասցե՝ ք.Քաջարան, Բակունցի 1	Հասցե՝ ք.Երևան, Ռաֆֆու 111
Բանկ՝ «Ամերիաբանկ»ԲԲԸ	Բանկ՝ «ՀայԷկոնոմբանկ»ԲԲԸ
Հ/Հ 1570025402170100	Հ/Հ 163008100220
ՀՎՀՀ 09417527	ՀՎՀՀ 02505735
Տնօրենի պաշտոնակատար Հ.Թադևոսյան	տնօրեն՝ Ա.Հովհաննիսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
L.S	L.S

Հավելված N 2
« 26 » փետրվար 2018 թ. կնքված
ՍՄՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
4	33621540	Պապավերին /պապավերինի հիդրոքլորիդ 2% 2.0 լուծույթ ներարկման՝ Պապավերինի 2% 2		10%	20%	30%	40%	50%	60%	70%	80%	90%	100%	100%
11	33691186	Պիրացետամ 200մգ/մլ; 5մլ լուծույթ ներարկման		10%	20%	30%	40%	50%	60%	70%	80%	90%	100%	100%
12	33621250	Դեքստրան 70՝ 60մգ/մլ; 250մլ, պլաստիկե փաթեթ՝ Պոլիգլյուկին		10%	20%	30%	40%	50%	60%	70%	80%	90%	100%	100%
13	33621250	Դեքստրան 70 60մգ/մլ; 500մլ պլաստիկե փաթեթ՝ Պոլիգլյուկին		10%	20%	30%	40%	50%	60%	70%	80%	90%	100%	100%
19	33691176	Տրիմեպերիդին /տրիմեպերիդինի հիդրոքլորիդ 20մգ/մլ; ամպուլներ 1մլ լուծույթ ներարկման՝ Պրոմեդոլ		10%	20%	30%	40%	50%	60%	70%	80%	90%	100%	100%
21	33691133	Ջուր ներարկման 2 մլ		10%	20%	30%	40%	50%	60%	70%	80%	90%	100%	100%
24	33621250	Դեքստրան 40 100մգ/մլ; 250մլ պլաստիկե փաթեթ՝ Ռեոպոլիգլյուկին 40 100 մգ/մլ 250 մլ		10%	20%	30%	40%	50%	60%	70%	80%	90%	100%	100%

25	33621250	Դեքստրան 40 100մգ/մլ; 500մլ պլաստիկե փաթեթ՝ Ռեոպոլիգլյուկին 40 100 մգ/մլ 500 մլ		10%	20%	30%	40%	50%	60%	70%	80%	90%	100%	100%
26	33691129	նատրիումի քլորիդ, կալիումի քլորիդ, կալցիումի քլորիդ 8,6մգ/մլ+0,3մգ/մլ+0,49մգ/մլ; 250մլ պլաստիկե փաթեթ՝ **Ռինգեր 250 մլ**		10%	20%	30%	40%	50%	60%	70%	80%	90%	100%	100%
27	33691129	նատրիումի քլորիդ, կալիումի քլորիդ, կալցիումի քլորիդ 8,6մգ/մլ+0,3մգ/մլ+0,49մգ/մլ; 500մլ պլաստիկե փաթեթ՝**Ռինգեր 500 մլ**		10%	20%	30%	40%	50%	60%	70%	80%	90%	100%	100%
52	33611341	Թիամին, թիամինի հիդրոքլորիդ 50մգ/մլ; ամպուլներ 1մլ լուծույթ ներարկման՝ **Թիամի 50 մգ/մլ, 1 մլ**		10%	20%	30%	40%	50%	60%	70%	80%	90%	100%	100%
78	33651134	Ցիպրոֆլոքսացին /ցիպրոֆլոքսացինի հիդրոքլորիդ 2մգ/մլ; 200մլ պլաստիկե փաթեթ լուծույթ կաթիլաներարկման՝ **Ցիպրո-Տեք 2 մգ/մլ, 200 մլ**		10%	20%	30%	40%	50%	60%	70%	80%	90%	100%	100%
79	33651134	Ցիպրոֆլոքսացին /ցիպրոֆլոքսացինի հիդրոքլորիդ 500մգ դեղահատեր թաղանթապատ՝ **Ցիպրոֆլոքսացին 500մգ**		10%	20%	30%	40%	50%	60%	70%	80%	90%	100%	100%
85	33611100	**Օմեպրազոլ 20մգ;** դեղապատիճներ		10%	20%	30%	40%	50%	60%	70%	80%	90%	100%	100%
86	33691176	հիդրոքսիէթիլ օսլա 60մգ/մլ; 500մլ պլաստիկե փաթեթ՝ **Պլազմո Տեք**		10%	20%	30%	40%	50%	60%	70%	80%	90%	100%	100%
90	33661114	**Ֆենտանիլ 0,05մգ/մլ; 2մլ,** լուծույթ ն/ե և մ/մ ներարկման		10%	20%	30%	40%	50%	60%	70%	80%	90%	100%	100%
98	33651124	Ցեֆտազիդիմ /ցեֆտազիդիմի պենտահիդրատ 1000մգ; ապակե սրվակ, դեղափոշի ներարկման/կաթիլաներարկման լուծույթի՝ **Ֆորտում**		10%	20%	30%	40%	50%	60%	70%	80%	90%	100%	100%
100	33691223	Նադրոպարին կալցիում 2850ՄՄ AXa/0,3մլ; նախալցված ներարկիչներ 0,3մլ լուծույթ ներարկման՝ **Ֆրաքսիպարին 2850ՄՄ AXa/0.3 մլ**		10%	20%	30%	40%	50%	60%	70%	80%	90%	100%	100%

**** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:***

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

«Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ
Հասցե՝ ք.Քաջարան, Բակունցի 1
Բանկ՝«Ամերիաբանկ»ԲԲԸ
Հ/Հ 15700254021701000
ՀՎՀՀ 09417527
Տնօրենի պաշտոնակատար Հ.Թադևոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

«Արֆարմացիա»ՓԲԸ
Հասցե՝ ք.Երևան, Ռաֆֆու 111
Բանկ՝ «ՀայԷկոնոմբանկ»ԲԲԸ
Հ/Հ 163008100220
ՀՎՀՀ 02505735
տնօրեն՝ Ա.Հովհաննիսյան

/ստորագրություն/
Կ.Տ